

## ՅԱՃԱԽ ԳԻՇԵՐՈՒԱՆ ԱՆԳՈՐՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Յանախ գիշերուան խորն անդորրութեան,  
 Երբ կապեր է զիս դեռ ֆունի շրդթան,  
 Լոյսը կը բերէ ցանկալի յուշեր  
 Անցնող օրերէն, որ իմս եղան:

Փրպիտներ, լացեր,  
 Անցած օրերու  
 Եւ սիրոյ բառեր  
 Երբեմն խօսուած,  
 Աչքեր շողափայլ,  
 Այլեւս մարած,  
 Սիրտեր կենսութեան  
 Յաւտ խորտակուած:

Այսպէս գիշերուան խորն անդորրութեան,  
 Երբ կապեր է զիս դեռ ֆունի շրդթան,  
 Լոյսը կը բերէ տխրագին յուշեր  
 Անցած օրերէն, որ իմս եղան:

Կը յիշեմ բոլոր իմ շուրջս եղած  
 Սիրտերն բարեկամ, իրարու կապուած,  
 Որոնք մէկ առ մէկ ինկան անվարան,  
 Տերեւներու պէս ցուրտէն ձմեռուան:

Դերձանէն փրքած  
 Մարդու մը նրման,  
 Կը թուիմ ըլլալ  
 Ամայացած եմ  
 Տուներն խնոյքի  
 Եւ մարեր անոնց  
 Լոյսերը բոլոր,  
 Իսկ դրասանգներն  
 Թառամած իսպառ:

Այսպէս գիշերուան խորն անդորրութեան,  
 Երբ կապեր է զիս դեռ ֆունի շրդթան,  
 Կը բերէ ցորեկ տըխրագին յուշեր  
 Անցնող օրերէն, որ իմս եղան:

THOMAS MOORE

Թրգմ. Ե.